

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

« » _____ 2024 N -Ն

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկլարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 70.1-ին հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- Սահմանել ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերը՝ համաձայն հավելվածի.
- Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝

1) սույն որոշման հավելվածով սահմանված ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերը հաշվի առնել ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի գնահատման և որակի բարելավման համար՝ դրանք ներառելով Ջրավազանային կառավարման պլաններում.

2) սույն որոշման հավելվածով սահմանված ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերի թարմացման ժամանակ հաշվի առնել՝ այդ ժամանակահատվածում ջրային ռեսուրսի որակի մոնիթորինգային տվյալների ավելացումը և քիմիական ցուցանիշների կոնցենտրացիաների արժեքները:

- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2024 թվականի

« » ____ N...-Ն որոշման

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերը և դրանց հիման վրա ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակները:
2. Ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակները գնահատվում են հիմնվելով ստորերկրյա ջրերի քիմիական և քանակական ցուցանիշների վրա:
3. Ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակներն ըստ քիմիական ցուցանիշների որոշվում են հիմնվելով քիմիական ցուցանիշի կոնցենտրացիայի արժեքի վրա:
4. Ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակը գնահատվում է լավ, եթե ջրի որակի քիմիական ցուցանիշները գնահատվել են լավ, և ստորերկրյա ջրային մարմնի կարգավիճակը գնահատվում է վատ, եթե ջրի որակի քիմիական ցուցանիշներից որևէ մեկը գնահատվել է վատ:
5. Ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակը և որակի նորմերը՝ ըստ քիմիական ցուցանիշների ներկայացված են N 1 աղյուսակում:

Աղյուսակ N 1

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎ ՈՐԱԿԻ ՆՈՐՄԵՐ՝ ԸՍՏ ՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ

ՀՀ Ցուցանիշներ

Ստորերկրյա ջրային Ստորերկրյա ջրային

		մարմինների լավ կարգավիճակ Ձրի որակի նորմ	մարմինների վատ կարգավիճակ
1. 1	Ընդհանուր հանքայնացում	≤ 1000	> 1000
2. 2	Տեսակարար էլեկտրահաղորդականություն	≤ 1562.5	> 1562.5
3. 3	pH	$\geq 6.5 \leq 9.5$	$\leq 6.5 \geq 9.5$
4.	Կոշտություն	≤ 7	> 7
5. 4	Սուլֆատ իոն	≤ 187.5	> 187.5
6. 5	Քլորիդ իոն	≤ 187.5	> 187.5
7. 6	Նատրիում	≤ 150	> 150
8. 7	Նիտրատ իոն	≤ 37.5	> 37.5
9. 8	Նիտրիտ իոն	≤ 0.375	> 0.375
10. 9	Ամոնիում իոն	≤ 0.375	> 0.375
11. 1	Ֆոսֆատ իոն	≤ 0.3	> 0.3
12. 1	Պղինձ	≤ 50	> 50
13. 1	Ցինկ	≤ 100	> 100
14. 1	Քրոմ	≤ 37.5	> 37.5
15. 1	Արսեն	≤ 7.5	> 7.5
16. 1	Կադմիում	≤ 3.75	> 3.75
17. 1	Կապար	≤ 7.5	> 7.5
18. 1	Նիկել	≤ 15	> 15
19. 1	Ճարիր	≤ 7.5	> 7.5
20. 1	Սելեն	≤ 15	> 15
21. 2	Մոլիբդեն	≤ 37.5	> 37.5
22. 2	Բոր	≤ 0.9	> 0.9
23.	Ֆտորիդ իոն	≤ 1.125	> 1.125
24.	Այոմին	≤ 150	> 150

25.	Երկաթ	≤ 0.15	> 0.15
26.	Մանգան	≤ 0.375	> 0.375
27.	Սնդիկ	≤ 0.75	> 0.75
28.	Ցիանիդ իոն	≤ 0.0375	> 0.0375
29.	Բենզոլ	≤ 0.75	> 0.75
30.	Բենզապիրեն	≤ 0.0075	> 0.0075
31.	Պետտիցիդներ, ընդհանուր	≤ 0.375	> 0.375
32.	Ալդրին	≤ 0.0225	> 0.0225
33.	Դիելդրին	≤ 0.0225	> 0.0225
34.	Հեպտաքլոր	≤ 0.0225	> 0.0225
35.	Հեպտաքլոր էպօքսիդ	≤ 0.0225	> 0.0225
36.	Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածիններ, ընդհանուր	≤ 0.075	> 0.075
37.	Եռքլորէթիլեն և երկքլորէթիլեն	≤ 7.5	> 7.5
38.	1,2-երկքլոր էթան	≤ 2.25	> 2.25
39.	Եռհալոմեթաններ, ընդհանուր (գոլմարային քլորոֆորմ, բրոմֆորմ, երկբրոմքլորմեթան և բրոմերկքլորմեթան)	≤ 22.5	> 22.5
40.	Հալոքացախաթթուներ	≤ 45	> 45
41.	Էպիքլորոհիդրին	≤ 0.075	> 0.075
42.	Ածխաջրածնային ինդեքս	≤ 75	> 75
43.	Քլորիտ իոն	≤ 0.1875	> 0.1875
44.	Քլորատ իոն	≤ 0.1875	> 0.1875
45.	Բրոմատ իոն	≤ 0.0075	> 0.0075

6. 6. Ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակներն ըստ քանակական ցուցանիշների սահմանվում են՝ հիմնվելով ջրավազանային կառավարման պլաններով սահմանված ջրային մարմինների օգտագործելի ծավալի վրա:
7. 7. Ստորերկրյա ջրային մարմնի կարգավիճակը գնահատվում է լավ, եթե միջին տարեկան ջրառի ծավալը (մլն.մ³/տարի) չի գերազանցում ջրային մարմնի օգտագործելի ծավալի 95 տոկոսը:
8. 8. Ստորերկրյա ջրային մարմնի կարգավիճակը գնահատվում է վատ, եթե միջին տարեկան ջրառի ծավալը (մլն.մ³/տարի) գերազանցում է ջրային մարմնի օգտագործելի ծավալի 95 տոկոսը: